ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կաթնաղբյուր, 077-843-043, 098-39-08-39, katnaxbyur@mail.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 33

## ԱՐԾՐՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 Ն որոշման, Համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի N 46 Ն որոշման և հաշվի առնելով Արծրուն Գրիգորյանի դիմումը.

*Որոշում եմ*

1. Արծրուն Գրիգորյանին տալ տնտեսական շինության շինարարության թույլտվություն (N 01 շինարարության թույլտվությունը կցվում է)։

2. Արծրուն Գրիգորյանը պարտավոր է Կաթնաղբյուրի համայնքապետարանի 900105215256 հաշվեհամարին մուծել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ Շինարարության թույլտվության համար։

3. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Կաթնաղբյուրի համայնքապետարան և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական տեսչության Կոտայքի մարզի տարածքային բաժին ներկայացնել N 5 ձևի տեղեկանք։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արծրուն Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՔԱՋԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ______________
գ.Կաթնաղբյուր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կաթնաղբյուր, 077-843-043, 098-39-08-39, katnaxbyur@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 34

## ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով.*

*Որոշում եմ*

Կաթնաղբյուր համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 22-ի N <<Կաթնաղբյուր համայնքի 2018թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 49-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումը.

1. 01-բաժին 1-խումբ 1-դաս 4269 (հատուկ նպատակային նյութեր) հոդվածից 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամը տեղափոխել 01բաժին 1-խումբ 1-դաս 4267(կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածին
2. 01-բաժին 1-խումբ 1-դաս 4264(տրանսպորտային նյութեր) հոդվածի 20000 (քսան հազար ) ՀՀ դրամը երրորդ եռամսյակից տեղափոխել երկրորդ եռամսյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՔԱՋԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ______________ ______
գ.Կաթնաղբյուր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կաթնաղբյուր, 077-843-043, 098-39-08-39, katnaxbyur@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 35

## ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Ազդարարման համակարգի մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետը՝

**Որոշում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Գայանե Հարությունյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուրի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձ:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կաթնաղբյուրի համայնքապետարանի ազդարարման համար պատասխանատու անձին ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի մարտի 15-ի <<Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը , ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին>> N 272-Ն որոշմամբ սահմանված լիազորությունների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՔԱՋԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ______________ ____
գ.Կաթնաղբյուր